

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^ր ՏԱԻԻ, Ե. ՇՐՋԱՆ ԹԻԻ 36 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սիրում վանականաց (խմբագրական) Տ. Ա. : Տպանորութիւններ (Յուշատետք) ՄԵՆԱ-
ՍԵՐ : Անդրեւսի սեր (Բանաստեղծութիւն) Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ : Խաղողի պահեր (Ճամ-
բորութեան յիշատակներ) ՇԱՀՈՒՐԱՄ : Օսմ. Գրականութիւն : Պատմ. քաղաքական
(Նորակա) ԵԱԼԻՏ ԶԻԱ ՊԷՏ : Բարգւ. ՊԱՐԷՏ : Նորերու բաժինը : Դպրոցը քննարային

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ


ՄԱՍԻՍ Շաբաթների արեւելան բաժանորդագիրն է 4. Պոլսոյ համար քանոնը դրո-
ւ գաւառներուն համար իսունը դրո. կանխիկ վճարելի : Արհասանման 12 Թրակի : Կամ
5 րուայի : Թղթարական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուի : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացա-
ն, պէտք է իսկոյն իմացնեն խմբագրութեան : Ժամանակ անցնելի վերջ այս տեսակ առա-
կութիւնները նկատողութեան չեն առնուի :
Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայ-
մաններով :

Զեռ-ԲԷ կը ծառնուի ՀԱՏՈՒ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐՍՅԻ
Հասցէ

در عیاده غلطه (ماتیس) غرضی اداره
Redaction de la Revue MASSIS
Galata, Constantinople
Կ. Պոլս, Դալաթիա

LA CONFIANCE



ԼԱՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կա-
ռավարութեան ֆոնդօրին ներքեւ, երաշխաւորեալ զբաւազուիս ունի՝ հրդեհի ճիւղին հա-
ւար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապա-
հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ քաւոր մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գո-
ճգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ: Եւ կանոնաւոր գոր-
ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց
ու վստահելիութեան վրայ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այս հաւ-
րածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ զաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարի-
զի՝ Օբէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամպիք եւ այլն թատրոնները, նաեւ
Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանզի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ
տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լոնվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէթանի, Պէլ-Ժառտիւնիէրի,
Օթէլլաը: Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառատնոցները:

Թրանսպիրանթիք, Հալը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց,
Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան զբաղմունքն է՝ Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին
վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց
համար, Գ. Աճառեան կը վարէ Նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային
ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէտլիք Եւլազլ փաշա, Թիւ 14, Լա Գօնֆրանս
ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր աշխատանքները սեփականութիւնը հղող աքսիալ
վաճառատուն մը, Շուկայ Սահաֆլար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յաճա-
սորութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎՊԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲՄԻՁ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ		
Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	274,000,000	Քր.
1902ին գանձուած ապահովագիրն	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»
ԿԵՆԱՑ ՃԻՒՂ		
Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	129,000,000	Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագիրն	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն» ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐԵՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵՆԻ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սպիացոյց՝ գեղջեալ գիւնեով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադննց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութիւնք ԶԵՐԾ ԷՆ այն վնասներէն եւ յուսախաբուրքիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bēnēfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՆՐ դուրեւամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ ԹՈՒՐԿԻՅՈՅ ԵՒ ԱՐԵՆԵԼԻ ՏԵՐԵՆՈՒՅԻՆ

Պոլիս, Սուլթան Համաժ, Բասաժ Գաբրըր Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ 8-10



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ
(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄԱՆԱՐՈՅԺ

Մուղաթէրիէ Հիւանդանոցին եւ Պարսկական Դեպտանտան Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, Քիւ 16
Զբոսանեան աբառքման Պալպալեան ամէն օր ակոյաթի ամէն տեւան հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչև ժամը 5: Գիշերուածն օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակոյաները: Ծորեկները ակոյա քաշել տալու համար, որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին եւմէն կախեալ է: Վկայեալ տառամբուռ ժուրի Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն դրամանոսն մէջ: Աղբաւեներուն ձեռք 8-10

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ—ԱՏԱՄԱՆԱՐՈՅԺ

Վ. ԿԱՅԵԱՆ

ԻՍԹԻ ԱՏԱՄԱՆԱՐՈՒԺԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԵՆ

ԵՒ

ՊԱՇԵՂԻ ԺԸՆՎԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԵՆ
Կը բուժէ ակոյա ամէն տեսակ ցուեր եւ լինեալու հիւանդութիւններ, կատարելագործեալ սիւթլաներով: Հիւանդ Կ'ընդունի ամէն օր, Բերա, Մեծ Փողոց ԲԷՏԻ ԼԵՕՆԻՒ ՂԻՏԱՅԸ ԿԼԱՎԱՆԻ ԻՄՈՍՅ ԹԻՒ 2, Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչև ցորեկ աղքատաց ակոյա քաշելու ձեռք է:

7-10

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 36

4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1904

ՍԻՐՈՒԱԾ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Սիրուած և յարգուած վաճառականի տի-
պարն էր արդարեւ Մարտիրոս Էֆ. Թօքաթ-
եան որուն զմուտեամբ մարմինը կը հանգչի
Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիի պահա-
րանին մէջ, Մանչէսթրէն հոս փոխադրուելէն
ի վեր: Վաղն առաւօտ, շաբաթ, հանգու-
ցելոյն մահուան քառամսօրէն, այդ եկեղե-
ցիին մէջ տեղի պիտի ունենայ յուղարկաւո-
րութեան հանդէսը՝ նախագահութեամբ Ս.
Պատրիարք Հօր որ պիտի խօսի դամբանա-
կանը: Թաղումը պիտի կատարուի Շիշլիի
աղբ. գերեզմանատան մէջ ուր արդէն յա-
տուկ դամբարան մը պատրաստուած է:

Ժամանակին հաղորդերինք Մանչէսթրի
եկեղեցիին մէջ կատարուած արարողութիւնը
որուն փութացած էին ներկայ գտնուիլ ո՛չ
միայն հայ գաղութին անդամները, մասնա-
ւորապէս առեւտրական ու սեղանաւորական
դասը, այլեւ գիրքի և անուէրի տէր օտար-
ազգիներ որոնք չընկալուած էին դաճաղը՝
ճշմարիտ սուգի արտայայտութիւններով:
Տարակոյս չկայ որ վաղը Բերայի մէջ կա-
տարուելիք յուղարկաւորութիւնը աւելի՛ մե-
ծաշուք հանգամանք մը պիտի ունենայ որուն
մանրամասնութիւնները պիտի հրատարակեն
օրաթերթերը:

Այս պայմաններուն մէջ, անգամ մըն ալ
այժմութիւն կ'առնէ, — թէեւ տխուր այժ-
մութիւն մը, — Մարտիրոս Էֆ. Թօքաթեանի
անունը, հակառակ անոր մահէն ի վեր քառ-
սուն օրեր անցած ըլլալուն, եւ իր մարմինը
վերջին բնակարանը հանգչեցնելուն քսանը-
չորս ժամ մնացած՝ հրապարակագրի պարտա-

կանութիւն կը դառնայ ակնարկ մը ձգելու
այդ անհետացող պատկառելի դէմքին վրայ:

Երբ յուլիսի վերջին շաբթուն հեռագիրը
գուժեց Մարտիրոս Էֆ. ի մահը, լրագիրները
միահամուռ գտնուեցան՝ ո՛չ թէ բռնադատիկ
դրուատականներ հիւսելու իր վրայ, ինչպէս
կը պատահի երբեմն այս կամ այն հարուստին
համար, այլ անոր կեանքին յատկանշական
գիծերը մէջտեղ դնելու պարզապէս, որոնց
մէջ կը կայանար իր բովանդակ գովեստը՝
խորհրդածութեան պէտք իսկ չի ձգելով: Եւ
անոնք որ Պոլսոյ կամ Մանչէսթրի մէջ առիթ
ունեցած էին մօտենալու ծերունի վաճառա-
կանին և անոր բարեկամութիւնը կամ սպա-
սանքութիւնը վայելելու, անկեղծ ու բարի
վկայութիւններ ունէին իրենց չըթուեցին
ծայրը, դառն ցաւով մը համակուած հիմայ:
Մարտիրոս Էֆ. Թօքաթեան ո՛չ միայն մե-
ծահարուստ էր, կ'ըսէին, այլեւ մեծանձն,
աղնիւ սիրտի տէր, իրմէ ետ մնացածներուն,
գործի ասպարէզին մէջ ձախողուածի հան-
դիպողներուն օժանդակութեան ձեռք կար-
կառող, բնաւի՛ն եսասէր, ընդհակառակը
վեհանձն ու զգայուն: Բայց, իբրեւ սեղանա-
ւոր — վաճառական, իբրեւ գործնական մարդ,
իր վեհանձնութիւնը ու զգայնութիւնը գի-
տէր արտայայտել այնպիսի եղանակներով որ
անցողակի բարիք մը չըլլային իրեն դիմող-
ներուն, այլ տեւական ու արդիւնաւոր:
Սնանկութեան մօտեցողներու կամ առեւտրա-
կան տագնապալի կացութեան մէջ գտնուող-
ներու պատմութիւններ յիշուեցան, որոնց
պէտք եղածին չափ վարկ կը բանար Թօ-

քաթեան Տան պետը՝ փրկելով անունի մը արատաւորութիւնը և ընտանիքի մը կործանումը։ Այս կերպով, նոյն իսկ առեւտրական հրապարակի վրայ գիտէր բարեգործել՝ իրեն առանձնայատուկ եղող ձեւով մը։ Իսկ իր ձեռքին տակ աշխատող պաշտօնեաներուն նկատմամբ տածած գուրգուրանքը և անոնց յառաջդիմութեան ու ապագայի ապահովութեան համար ունեցած հոգածութիւնը առածի կարգ անցած են առեւտրական շրջանակներուն մէջ։

Ասոնցմէ դուրս, Մարտիրոս էֆ. Թօքաթեան երբեք անտարբեր գտնուած չէ հանրային բարեգործական ու բարեպաշտական պէտքերու առջև, երբ դիմում կ'ըլլուէր իրեն, որոնց օգտակարութիւնը կըմբռնէր։ Իսկ անհատական բարիքները, անոնք որոնց համար «աջլին տուածը ձախը չգիտնար» կըսուի, անշուշտ լայն տեղ մը բռնած են իր կեանքին մէջ ու իր մահուան սնարին վերև իր քունը թեթև կը դարձնեն։

Ոչ նուազ յարգելի յիշատակ մը կը թողու հանգուցեալը, իր համայնքին համար, տարբեր տեսակէտով մը, — այն մեծ մղումովը զոր գիտցած է տալ իր գործունէութեան երկար և յաջող շրջանին մէջ, հայ վաճառականներու շիրքին և անունին բարձրացման՝ Մանչէսթըրի առեւտրական հրապարակին վրայ ուր անխտիր համակրանք կը վայելէր։

Այստեղ կրնային կանգ առնել Մարտիրոս էֆ. Թօքաթեանի կեանքին գլխաւոր դիժերը, եթէ ինքը ամփոփուած ըլլար իր պատուաւոր վաճառականի ու բարեգործ անձնաւորութեան սահմանին մէջ, որոնք պիտի բաւէին իրեն՝ երախտագէտ զգացումներ միայն տեսնել իր շուրջը։ Բայց, եզականը հոն է որ, այս եօթանասնամեայ ծերունին, գրասէր ու գեղարուեստասէր ալ էր՝ առդիսդի մը ու գրագէտի մը ըմբռնումներով ու ճաշակներով. քաջ անգլիագէտ ու գերմանագէտ, Շէքսպիր ու Շիլլէր կը կարդար իր պարապոյ ժամերուն, իբրև իր նախասիրական երկու մեծ հեղինակները, Եւրոպայի մտաւորական շարժումին կը հետեւէր՝ թերթերու և գիրքերու

միջոցաւ, և իր ամառնային արձակուրդները կը նուիրէր ուղեւորական ուսումնասիրութիւններու, այցելելով միւզէներ, մատենադարաններ, գեղարուեստական միջավայրեր ու յիշատակարաններ որոնցմէ ճշմարիտ հաճոյք մը կըգգար, եւ իր բարեկամները կը պատմեն թէ, ընկերական մարդ էր, — բառին ազնուագոյն առումովը, — լաւ խօսող ու causeriet ճաշակ առնող։

Իր մահը իրապէս դառն կորուստ մըն է մեր համայնքին համար ընդհանուր կերպով, և Մանչէսթըրի հայ գաղութին համար մասնաւորապէս։ Թէև ամուրի՝ բայց հօր մը մահուան տպաւորութիւնը կը թողու Թօքաթեան Տան և ընտանեաց բոլոր անդամներուն վրայ։ Ու եթէ կսոյ բան մը որ կրնայ մեղմացնել այդ դառնութիւնը, Թօքաթեան Տան գլուխը գտնուիլն է իր ոչ նուած սիրուած ու յարգուած եղբօրը՝ Տիգրան էֆ. Թօքաթեանի որ որչափ առեւտրական ու սեղանաւորական հրապարակին վրայ, — իր եղբօր՝ Յովսէփ էֆի հետ, — հայ վաճառականութեան պատուաւոր շիրք մը ունի, նոյնքան ալ բարի և վեհանձն զգացումներ կը տածէ բարեպաշտական ու կրթասիրական հաստատութեանց նկատմամբ։ Մասնաւորապէս, Բերայի Կալուածոց Հոգաբարձութեան ու Շիլլիի գերեզմանատան Յանձնաժողովին մէջ իր նուիրած անձնուէր ու արդիւնաւոր աշխատութիւնները այնչափ ակներև են, որ իր համեստութիւնը վիրաւորել պիտի ըլլար՝ անոնց անդրադառնալը ներկայ տխուր պարագային մէջ։

Տ.Ա.

3 Օգոստ. Ուրբաթ

Յաջորդ թիւով՝ երկու զուտ գրական գեղեցիկ գրուածքներ։

Երկու կոյրերը. ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Մօրք ուխտը ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՅԷ

Դր. Զօհրայ էֆ., որ փաստաբանական գործով Իզմիր ուղեւորած էր, մայրաքաղաքս վերադարձաւ։

ԱՆՊԵՐՍՈՒՄՆԵՐ



Մահուան նենգոս համբույրներուն տակ երբոր
Աչքերս փակուին թաղծագին,
Երբ բիբերուս հուրք մարի ու բոլոր
Հոգւոյս կայծերն անթելուին:

Երբ ուղեղս դադրի յանկարծ փու վաղ
Միտ խորհելէ, դիցունհի՛ս,
Երբ չեղազեմ գիշերներուս մէջ հանդարտ,
Ու պաղ շունչ մ'ալ գրկէ զիս,

Սիրքս երբոր բաբախելէ ա'լ դադրի,
Յոգնած ըլլամ հիւժումէս,
Զայնքս հասած ըլլայ երբոր ու քեզի
Զկարեմամ ձայնել ես,

Երբ վերջապէս մոռնամ կեանքին տրտմութեան
Մեծ գողգոթան ցաւագին,
Բա՛ն մը մինակ, մի՛հակ բա՛ն մը սիրտկան,
Պիտի ըզգամ տկուին:

Դիտե՛ս քե ի՛նչ. — Մահուրնէս վերջ գտնուին
Թերեւս շատեր, որոնք լան,
Եւ յիշատակս ըլլայ իրենց մըտերիմ,
Զիս յիշելով յաւիտեան:

Սակայն ո՛չ ոք պիտի միտէն անցընէ
Ինձմէ առաջ քե՛զ ողբալ.
Դո՛ւն որ պիտի տառապիս միտ ու գուցէ
Ինձմով ըլլաս սիրահալ:

Հեծկրթուրդ պիտի խղդես անխրիտ,
Պիտի խնդա՛ս անոնց պէս:
Վիշտին դազաղն ըլլայ պիտի փու հոգիդ,
Զոր պատշեցի պարզապէս:

Մարդու պիտի չըսես փու ցաւդ գրեթէ,
Թափուն սերեղ յոգնաբեկ.
Ու քեզմէ զատ ո՛չ ոք պիտի զիսնայ քե,
Զիրար նորէն կը սիրենք...

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ



ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՅՈՒՇԱՏԵՏՐԷՍ)

ԽՐԻՍՏԻԱ

23 Օգոստոս. — Երեւոթի. — Չեմ գիտեր ինչո՞ւ, այս իրիկուան թերթերը կարդալու, միուսեւծաբոնական պատերազմին հրատապ հեռագիրներէն կամ Պատրիարքարանի արձագանգներէն աւելի՝ ուշադրութիւնս յառած կը մնայ Ներքին Լուրերուն տակը, սիւնակի մը ստորոտը զետեղուած, կարծես ամօթահար կերպով կծկտուած entrefiletի մը վրայ, որ «Անձնասպանութիւն» խորագիրը կը կրէ... «Խահուէի հրապարակ»ին ու «Արկածներ»ուն մէջտեղ. —

«Եէնի-Գարուի բնակիչներէն Յակոբի դուստրը՝ Խրիսթիկ՝ երէկ ինքզինքը Ունգարանի կամուրջէն ծովը նետեց, անձնասպան ըլլալու համար: Անմիջական օգնութիւններ ազատեցին յուսահատ աղջկան կեանքը՝ սիրային յարաբերութեան մը զոհ երթալէ»:

Խրիսթիկ... ինչ անհրապոյր և մանաւանդ աններդաշնակ անուն, սիրոյ ու անձնասպանութեան յարմարող, գէթ վէպերու և նորավէպերու մէջ, որոնք կը պահանջեն անպատճառ որ իրենց հերոսունին կոչուի Էլիզ, Նուարդ կամ Մառի, Բերացի կամ Գառգիւղացի ըլլայ և իր հղերական խորհուրդը ի դորձ դնէ Մօտայի ծովախորշէն՝ եթէ ոչ Բրինքիբոյի ծովեղբայրէն: Վէպին պայմանադրական կանոնները ասոնք են: Իրականութեան մէջ. ինքզինքը սիրոյ զոհելու զող օրիորդը կը կոչուի Խրիսթիկ և անձնագոհութեան վայր կ'ընտրէ Ունգարանի կամուրջը: Իր սիրած երիտասարդը թերևս ձկնորս մըն է կամ փերեզակ մը և իրենց ամուսնութեան արգելքը՝ որեւէ խնդիր բաց ի... դրամօժիտի նկատումէ:

Եւ, առանց ճանչնալու Խրիսթիկը, կը համակրիմ իրեն, աւելի ձիւղը՝ կը կարեկցիմ, նկատելով զինքը կամքի և սրտի տէր աղջիկ մը որ սիրով կը հրաժարի կեանքէն՝ անոր համար միայն որ իր սիրած երիտա-

սարդը անհաւատարիմ գտնուած է իրեն կամ ծնողքը չեն հաւատած իրենց ամուսնութեան:

Այն տիպարները զորս կը ներկայացնեն մեզի վէպերու մէջ, ընդհանրապէս ունեւոր դասակարգի աղջիկներ կ'ըլլան, բարձր կրթութիւն առած, լաւ դաշնակ զարնող, նրբիւրան, նրբահասակ, խարտեալ մազերով ու կապոյտ երազուն տըքերով. հուրիի պէս աղջիկներ, որոնք մտացածին տղայ մը կը սիրեն, և իրենց միութիւնը փութացնելու համար՝ դողահար քայլերով դէպի ծովեղբայր զիմելով, քուս չըջաղգեստնուն քղանցքները վեր կը ժողվեն չնորհալիօրէն, իբր թէ պարահանդէսի մը մէջ գտնուէին, ու հաղիւ կը համարձակին թրջել իրենց մանրիկ սփռքիները, աւազուտ ջրին եղերքէն, մինչև որ քայլ մը հեռուն սպասող բարեկամը կամ բարեկամուհին օգնութեան հասնի, և «Ինչ կ'ընես, Էլիզ, խնդեցա՞ր» ըսէ ու կտրքով տուն փոխադրէ զինքը, ծնողքին յանձնելու:

Իրականութեան մէջ, անձնասպան աղջիկը թխորակ և գիրուկ կ'ըլլայ, ձեռքերը լուացքէն կամ արդուկէն կոշտացած. սև մազեր կունենայ՝ անշնորհք զլխարկի մը ներքեւ, արագ՝ տենդաղին կերպով կը հանգրիճէ չըջաղգեսաւը, շուարումէն մօրը պօթիմ ներք կը հաղնի, և «հիմայ կուգամ» ըսելով՝ չուսչը Ունգարանի կամուրջը կ'առնէ. մէկ ոստումով, զլխիվայր, կը խորասուզուի Ոսկեղջիւրի տղմուտ, ձգողական ալիքներուն մէջ, մեռնելու հաստատ տրամադրութեամբ: Եւ երբ քաջարի մակուկավար մը կամ նաւաստի մը, կեանքը վտանգի ենթարկելով կը հասնի ետեւէն, ու քղանցքներէն, թեւերէն բռնելով, կ'ազատէ զինքը, խեղճ աղքատ աղջիկը՝ երկար տաղնապէ մը ետքը՝ աչքերը բանալուն, իր ծնողական յարկին տակ գտնելով ինքզինքը, մայրը զլտուն վերեւ, դառնութիւն մը, տրամու թիւն մը կ'ուսնենայ՝ նորէն ախարհք տեսնելուն համար որ չպիտի ժպտի իրեն:

Եւ զձ. Խրիսթիկ. Լիջօրէն անձնասպանութեան զիմող աղջիկն է ինքը, իրապէս սիրողը, որ մեր վէպերուն մէջ ոչ իր տեղը ունի ոչ իր գոյութեան իրաւունքը:

ՎՈՍՓՈՐԻ ՎՐԱՅ

28 Ognus. — Կիրակի. — Տեղատարաւ անձ-
րենքէն ետքը՝ գարնանային երեւոյթ մը
առեր է բնութիւնը ամէն կողմ, բլուրներուն
կողմ ի վար, ծովեզրին երկարութեամբ տա-
րածուող պարտէզներուն մէջ, որոնց մօտէն
կ'անցնի շողեհաւնիս: Երկինք ջինջ կապոյտ է
ու արեւը պայծաւ. բայց հակառակ այս կա-
պոյտին ու պայծառութեանը, հակառակ ցա-
մաքի մարգերուն դալարութեանը, բան մը
կայ այս ամէնուն մէջ որ գարնան պատրան-
քը միայն կուտայ, իսկ իրապէս՝ այնան մօ-
տաւորութիւնը կը յիշեցնէ. հովը աւելի
պաղ է քան զով, և ամառնային թեթեւ,
նորա արդուզարդերը, գեղեցիկ սեւին վրայ,
ցանցառ կը դառնան, տեղի տալով քիչ չատ
պատկարող հագուստներու: Բայց բազմու-
թիւնը միշտ նոյնն է, գոյգեր, ամբողջ ըն-
տանիքներ որոնք իրենց հանգիստի օրը կեր-
թան անցունել Վերին Վոսփորի գիւղերէն
մէկուն մէջ, նախամեծարութիւն տալով է'ն
հեռաւորին որ Ջուրերը կը տանի: Բիչեր
կան որ ըմբոշինել գիտնան Յրլտաքը, որուն
բարձրօդի դադաթը մարդուս կուտայ կաղ-
դուրում, ներշնչում, և աչքի անսահման վա-
յելք՝ դէպի Սև ծով տարածուող իր հոյա-
կապ տեսարանովը, մինչ Գալագներուն ճամ-
բան հանդարտիկ ճեմավայր մըն է ուսկից
լսուող նուագածութիւնը՝ ժառերուն ստորո-
տը բաղլոող ալիքներուն գոռումն է միայն ու
լերան կատարներէն սուշող հովը: Երբ մուծը
կ'իջնէ այդ փոշիւից ճամբուն վրայ, որ դե-
ղին շերտէ մը պէս կ'երկարի լեռան կանանչ-
ներուն մէջտեղէն; և ստուերները կը տա-
րածուին Յրլտաքի ծառերուն շուրջը, տե-
սարանը կը փոխուի և այդ մուծ անկիւնէն
Վոսփորը կը պարզուի նոր հմայքով մը, իր
եզերքներուն գիւղերային կենդանութեանը
մէջ, իր փարոսներուն դարձգարծիկ լոյսե-
րովը, յետամնաց նաւակներուն արագ դը-
նացքովը որոնց մէջէն աղուոր ձայներ կը
բարձրանան երբեմն, արեւելեան սիրերգ մը
երգելով, որոնց խօսքերը չեն լսուի որո-
շտիկ՝ բայց կը զգացուին, և արձագանգները
թրթռալով կուգան կը հասնին երիտասարդ

ու սիրող սիրտերու, անթել հեռագրին օդա-
յին վէտվէտումներուն պէս:

Սիրող սիրտեր... բայց սէր մնացած է
հիմայ, մանաւանդ այն ճեմավայրերուն մէջ,
ինչպէս են Վոսփորն ու Կղզիները և Բերայի
հանրային պարտէզները, ուր ամէնէն աւելի
ընդհանրացած կերեւայ Ֆիլոքը: — Չեմ կար-
ծեր որ այս բառին սահմանը տալու պէտք
մնայ՝ այն ներամտութեամբ ու ճշդութեամբ
գրուած յօդուածէն ետքը զոր Բրիգանթէմ
նուիրեց այդ բառին, Մասիսի մէջ, և որուն
պիտի նախանձէր որ և է ընդարձակ բառա-
րանի հեղինակ, նոյն իսկ Անտիկլօքէտի մը
հեղինակը: — Բայց, մեր այսօրուան երիտասար-
դութեան իրական կեանքին մէջ, սէ'րն ալ,
Ֆիլոթն ալ աղաւաղուած, խաթարուած են,
կորսնցնելով իրենց մաքուր ու բանաստեղ-
ծական նշանակութիւնը:

Իրիկունը կը վերադառնամ Վոսփորէն ու
րուն եւրոպական եզերքին վրայ, յունիսէն
ի վեր, ընդհանուր հետաքրքրութեան առար-
կայ կը դառնայ Թարապիոյ նորակառոյց օ-
թէլը, իր ճերմակ գեղեցիկ facadeովը, գե-
ղակերտ պալքոններովը, լայն պատուհան-
ներովը ու փառաւոր մուտքովը: Ամէն ան-
գամ որ շողեհաւ մը կանդ առնէ այդ նա-
ւամատոյցը, օրուան ո'ր ժամուն ալ ըլլայ,
հարիւրաւոր աչքեր հոն կը յառնին, տեսակ
մը հիացումով, ու խօսակցութիւնները անոր
վրայ կը դառնան, մինչ կ'նշական սիւնէդ-
ներ կ'ընդնշմարուին պատշգամներուն ապա-
կեայ կիսաբաց դուռներէն, առտուն ճերմակ
վարդագոյն չրջասգեսներով, և իրիկուն-
ները՝ աւելի խնամուած արդուզարդներով:
Ու վարը, քարափին վրայ, կառքերու, հե-
ծանիւններու, ճեմողներու երթեւեկ մը, —
աշխարհիկ ու կենցաղասէր դասին ոգեւորու-
թիւնը ցուցադրող:

Այս իրիկուն, Եէնիքէօյի բացերը, շողե-
հաւնիս վայրկեան մը դանդաղեցուց իր դը-
նացքը. արկածեալ մակոյկ մը կը նշմարուէր,
ալիքներուն դէմ մաքառող. բոլոր ուղեւոր-
ներուն ուշադրութիւնը այդ սպիտակ կէտին
վրայ կ'ըրոնացաւ. քանի մը նաւակներ օգ-
նութեան կը փութային.

— Զուր առաւ : Անօգուտ է : Պիտի ըն-
կըղմի, կ'ըսէին շուրջս :

— Ընկղմեցաւ, ձայնեց մէկը :

— Մէջի մարդիկը՝...

— Անշուշտ ազատուեցան :

Ու շոգենաւնիս շարունակեց իր ճամբան,
և ուղեւորները շարունակեցին իրենց ընդ-
հատուած խօսակցութիւնը՝ գիշերուան ճաշին
կամ վաղուան գործերնուն վրայ : Ալեկոծուած
նաւակը մոռցուած էր արդէն :

Կեանքի պատկեր մը չէ՞ր ասիկայ ալ :
Բարեկամ մը կամ բարեկամուհի մը կունե-
նանք որ դժբաղդութեան մը կը հանդիպի.
մեզի ճանօթ կամ անծանօթ անձի մը մէկ
արկածը կիմանանք. իրիկունը, օղիին ու
սուրճին մէջտեղ, կը խօսինք անոր վրայ,
պայմանադրական կարեկցութիւնը կ'արտա-
յայտենք ու կը մոռնանք :

«ԱՆՐՁԱՆՔ»

30 Օգոստոս. — Երեւոյթի. — Շարժուս վեր-
ջը Միրիճան Պարսամեան հրապարակ կը հանէ
իր ոտանաւորներու հատորիկը, Անգրաւնի,
Այս անունին ընտրութեանը պէս սիրուն,
զգայուն ոտանաւորներու հաւաքածոյ մըն
է, հաճոյքով կարդացուելու սահմանուած՝
դատելով այն համակիր ընդունելութենէն
զոր կը գտնեն ընդհանրապէս իր ոտանաւոր-
ները, մեծ մասով Մասիսի մէջ հրատարակ-
ուած՝ վերջին մէկ—երկու տարիներս :

Ահա՛ երիտասարդ մը որ գրականութեան
մէջ ճիւղ մը ընտրեց իրեն, բանաստեղծու-
թիւնը, սիրային բանաստեղծութիւնը մաս-
նաւորապէս, — թէ և իր նախակրթութիւնը
Արմաշ ստացած ըլլայ—մշակեց զայն, հետըզ-
հետէ աւելի՛ խնամք տարաւ իր յանգերուն,
ուսումնասիրեց ոտանաւորի կանոնները, և
իր բնածին հակումովը գիտցաւ գրել բանաս-
տեղծութիւններ՝ խանդով, զգացումով լե-
ցուն որոնք միշտ տպաւորութիւն մը կը
թողուն ընթերցողին վրայ :

Բանաստեղծութեան անընդունակ պատա-
նինք, երիտասարդներ կան, որոնք ի զուր
կը փորձեն գեղեցիկ ոտանաւոր մը գրել.
և վերջ ի վերջոյ, յանցանքը կը վերագրեն

«անունի հմայք»ին : Անգրաւնի, դեռ շատ
երիտասարդ հեղինակին, որ նորագոյն մըն
է մեր նոր գրողներուն մէջ, պարագան ցոյց
կուտայ թէ որչա՛փ սխալ է չի յաջողածնե-
րուն գանգատը : Մ. Ա. Պարսամեան անունը
բոլորովին անծանօթ ստորագրութիւն մըն
էր՝ երբ առաջին անգամ երեւցաւ ոտանա-
ւորի մը ներքեւ. խմբագրութիւններ գտնուե-
ցան որոնք գնահատեցին այդ անծանօթ,
վանքէն նոր դարձող պատանին զրուածք-
ները, ու հրատարակեցին զանոնք. տակա-
տակաւ, անունը ծանօթացաւ ու ոտանաւոր-
ները հաւնուեցան, իրեն համարձակութիւն
տալու աստիճան որ իր անտիպ բանաստեղ-
ծութեանց մէկ մասը հատորի մը մէջ ամփոփէ
որուն երեւումը պիտի ողջունենք մօտ օրէն :

ՄԵՆԱՍԻՐ

Տ. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԽԱՊԱՅԵԱՆ

Շարժութէն աւելի է որ մայրաքաղաքս կը
գտնուի Պէրութի նախորդ հոգեւոր հովիւ
Տ. Ներսէս Վրդ. Խապայեան որ՝ իբրեւ միա-
բան Երուսաղէմի՝ հիւրընկալուած է Երու-
սաղէմատան մէջ : Մտադիր է իր յօդացաւը
դարմանելու համար Պրուսայի Զերմուկները
երթալ, և այնուհետեւ ո՛ւր և ի՛նչ պաշտօնի
որ կոչէ զինքը Երուսաղէմի Ս. Պատրիարքը :
Ամէն անոնք որ կ'այցեւեն այստեղ Խապայ-
եան Հայրսուրբին, իրենց դէմ կը գտնեն
ծանրախոս և համակրելի եկեղեցական մը,
բոլորանուէր Ս. Յակոբեանց միաբանութեան
որուն փր անդամներէն է. Աղեքսանդրիոյ
Երուսաղէմապատկան կալուածներու տեսչու-
թենէն զատ : Վարած է վարչական ու տես-
չական պաշտօններ Երուսաղէմի մէջ, մինչև
Պէրութի հովուութեան կոչուիլը ուր իրապէս
օգտակար եղաւ երեքուկէս տարիի չափ
միամանակամիջոց, իր հողածութեան առար-
կայ դարձնելով շարունակ տեղւոյն վանքը,
եկեղեցին ու վարժարանը : Այս վերջինը մա-
նաւանդ զգալապէս բարեօրոշեցաւ իր օրով :
Պատրիարքարանի երկու գիւնապետները՝
Թէլեան ու Խաչատուրեան էֆ.ները՝ որոնք

ԽԱՂՈՂԻՆ ՊԱՀՔԸ

(ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ)

յաջորդաբար Պէրուժի այցելած էին իրենց երուսաղէմ ուղեւորութեան առթիւ, իրենք ալ բերած են այս տեղեկութիւնները, բայց անոնցմէ զորս ատեն ատեն հաղորդած են խղճամիտ թղթակիցներ: Իրաւ է որ Տ. Ներսէս Վրդ. Պէրուժի հայ համայնքին մէջ ունեցաւ իր հակառակորդները, — կուսակցական անխուսափելի միջադէպերը՝ որոնք ծայր կուտան քիչ շատ ամէն թեմի մէջ, դպրոցական և հոգաբարձուական խնդիրներէ ծագում առած, — բայց ատոնք անզօր էին նսեմացնելու Խապայեան Հայրսուրբին արժանիքը. և իր ինքնակամ հեռացումովը, լաւագոյն պատասխանը տուած եղաւ իր դէմ յարուցուած խժրճանքներուն:

Տ. Ներսէս վարդապետ Կ. Պոլիս ուղեւորած միջոցին, բաւական օրեր հիւր մնաց իզմիր և այցելեց նաև Ռօտօսթօ, յատուկ հրաւերով, և այդ երկու քաղաքներուն մէջ ալ յարգալիր ընդունելութիւն մը գտաւ թէ՛ եկեղեցական դասէն և թէ՛ աշխարհականներէն:

Ս. Պատրիարքը, որուն ներկայացաւ Տ. Ներսէս Վրդ. Կ. Պոլիս հասնելուն, Պէրուժի նախորդ տեսչին գոհացուցիչ պաշտօնավարութիւնը շեշտած է մասնաւորապէս և իր գոհունակութիւնը յայտնած:

Կը մազթենք որ Տ. Ներսէս Վրդ. կատարելապէս ապաքինի իր սկարութենէն և իրեն արժանաւոր պաշտօնի մը կոչուի կա՛մ երուսաղէմի վանքին մէջ և կա՛մ անոր հոգեւոր տեղութեանց մէկուն մէջ:

ՌՕՊԵՐԹ ՓՕԼԵՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կըսկի Սեպտ. 2/15ին: Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար: Վարժարանին մասնաւոր բժիշկը՝ ուսանողներու առողջութեան, մարմնամարդոներուն և խաղերուն, ինչպէս նաև վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ: Մարմնամարդի նոր և գեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարդի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն: Երկու տարիէ ի վեր բացուած է նաև փոքր տղոց յատուկ նոր շէնք մը, ուր կ'ընդունուին մինչև տասը տարեկան աշակերտներ:

Քաղաքը գիւղէն բաժնող տաաներկու ժամուան հեռաւորութիւնը օգոստոսի կիզիչ արեւին տակ կտրած անցած միջոցիս՝ տեսակ մը յուսահատութիւն կը տիրէր վրաս:

Սիրահարի մը յուզմամբ բաժնուած էի վնասիորէն, ու հակառակ զիս իրմէն անջատող անհուն հեռաւորութեան, անոր յիշատակը կուգար չարչրկել զիս: Իր ափերուն զաւակը չէի ես, բայց տաանըհինգ տարի շարունակ իր քովիկը անցուցած կեանքս իրեն համար խօշ պաշտում մը ծնուցած էր սրտիս մէջ:

Երեւակայութեանս թափ առած այս միջոցին, աղուոր երազի մը թովանքին տակ գտնուող մէկու մը պէս կը մոռնայի ճամբուն տանջանքը, բայց կէսօրուան մօտ այդ միւթարութիւնն ալ կորսնցուցի: Եփրատի երկու կողմը ցցւող ամայի լեռները կիզիչ տաքութիւն մը կ'արտաշնչէին ու հորիզոնէն վեր բարձրացող արեւը հասարակածի կրակ մը կը թափէր գլխուս վրայ:

Պողոտան ձգելով դէպի աջ շեղում մը ընելու պարտաւոր եղայ, ու այլևս խորտ ու ըորդ ճամբու մը վրայ իրարու յաջորդող զառիվները ձիուս ընթացքը անկարելի կ'ընէին: Խեղճ կենդանին ամէն մէկ քայլափոխին կը դողար ու վայրկեանէ վայրկեան ժայռերէն վար գլորելու վտանգը անխուսափելի էր կարծես:

Հակառակ յոգնութեանս, քալելու ստիպուեցայ ու դէպի Եփրատ հոսող գետակի մը եղերքն ի վեր գալարող նեղ արահետին վրայէն յուսահատական վերելքս ըրած միջոցիս, տարիներու կարօտէ վերջ՝ մօրաքոյրս ու իր զաւակները տեսնելու միակ տեսնիս էր որ քիչ մը ուժ կը դնէր խոնջած մարմնոյս մէջ: «Եթէ առանց զիս տեսնելու Պօլիս վերադառնաս, գիտցած եղիր որ շատ պիտի վըշտանամ» կը գրէր խեղճ կինը իր վերջին նամակին մէջ, ու այդ նամակը ստանալու

յաջորդ օրն էր որ արչալոյսին ճամբայ ինկած էի այցելելու զինքը: Երբ իրկիւնը մարը մտնող արեւուն վերջին ճառագայթներուն հետ շնչասպառ կանգ առի իր բնական գեղջկական տունին առջեւ, օրուան ամբողջ տառապանքս մոռցայ իր կարօտակէզ համբոյներուն տակ որոնցմով կը ծածկէր աչքերս ու այտերս: «Շո՛ւտ ըրէք, աղջիկներ, անկողինը պատրաստեցեք, թո՛ղ հանգստանայ տղաս, քիչ մըն ալ վաղը կարօտնիս կ'առնենք» ըսաւ մօրաքոյրս, երբ ճաշերնիս լմնցուցինք:

Ոչ իսկ երազ մը եկաւ վրդովել զիշերուան քունս:

* *

Առտուն սենեակէս ներս յորդող արեւուն ճառագայթներուն հետ էր որ արթնցայ ու պատուհանը վազեցի: Համայնապատկերը զոր տնէի աչքիս առջեւ, հիանալի էր:

Վարը ձորակին մէջէն կարկաջող առուն երկու մասի կը բաժնէր գեղը, և անոր կողերուն մօտիկը ցիր ու ցան շինուած սիրուն տնակները իրենց ծեփերուն սպիտակութիւնը կը ցօլացնէին արեւուն շողերուն տակ: Յորենի ու գարիի ընդարձակ արտեր կը տարածուէին չորս կողմը ու առտուն թեթեւ հովը ոսկեգոյն հասկերուն մէջէն անցնելով հանդարտ ծովու մը մեղմ ծփանքին պատրանքը կուտար անոնց: Աւելի հեռուն, գեղին աջ կողմը, մրգաստաններու մէջէն ցցուող ծառերուն ճիւղերը տանձի ու խնձորի հարուստ բուերուն տակ մինչեւ գետին կը խոնարհէին. քիչ մը անդին, ցանկապատ այգիները սեւ ու ճերմակ՝ խաղողներու սիրուն ողկոյզներ կը ցուցադրէին որթատունկերուն խոշոր ու դեղնորակ տերեւներուն մէջէն:

Պատուհանիս վանդակին կառչած՝ անյապօրէն կ'ըմբռնէի այդ համայնապատկերը, բայց դարմանքի ճիւղ մը չկրցայ զսպել երբ աչքերս կանգ առին մրգաստաններուն ճիւղդէմը, գետակին ձախ կողմը բարձրացող մեծկակ չէնքի մը վրայ:

Բարձր պատերով չըջապատուած գետնի մը ահագին տարածութեան ճիւղ մէջտեղը

շինուած էր այդ չէնքը, որուն չորս կողմը մինչև պատերուն եզերքը ձիւնի թանձր խաւով մը ծածկուած էին կարծես: Բարեհն անգամ հալեցնող օգոստոսի կիզիչ արեւին տակ տափակ դաշտի մը վրայ ձմրան այդ սպիտակ սաւանը բնութեան հրաշալիքներէն մէկը պիտի նկատէի, եթէ ճիշդ այդ միջոցին ջակէլը, մօրաքրոջս կրտսեր աղջիկը, ներս չմտնէր սենեակէս:

— Եղբայրս խնդրեց որ նախաճաշէն վերջ աղարան երթաս, շատ հեռու չէ, նայէ՛ վարը գետակին ձախ կողմը երեւցած ճերմակ տեղն է:

Հետաքրքրութենէս մղուած, առանց նախաճաշիս սպասելու, աղարան վազեցի: Մօրաքեռորդիս տետրակներու և թուղթերու շեղակոյտի մը առջեւ նստած կ'աշխատէր իր սենեակին մէջ. չուղեցի խանդարել աշխատութիւնը: Բայց իր գրագիրներէն մէկը ինձ ընկերացաւ և աղարանին ամէն կողմը պտտեցնելով՝ ուրիշ շատ մը ծանօթութեանց հետ բացատրեց հոն թէ մօտակայ լեռան տակէն բղխող աղի ջուրը խողովակներու միջոցաւ աւազանները կը բերէին, որ արեւուն տակ չորգիւնալով այդ աղը կը մնար զոր առտուն ձիւն կարծեք էի: Տարին եօթնութը հազար ոսկի հասոյթ բերող այդ աղարանը կատարեալ բարիք մըն էր գիւղին համար, որուն բնակիչներէն շատերը լեցուն աւուրչէքներ կ'առնէին հոն աշխատելով:

Մէկ երկու ժամ վերջ տղու մը առաջնորդութեամբ գիւղ վերադարձայ: Հազիւ տասներեք տասնչորս տարեկան տղայ մըն էր, բայց իր քալուածքին մէջ անանկ վեթիւն մը կար որ կարծես ինքն էր աղաբանին վերատեսուչը:

— Թորո՛ս, պարտէզները պտտցուցի՛ր եղբայրս, հարցուց Զապէլ, երբ տուն հասանք:

— Չէ, հանրմ, վաղը մեզի հրամանեցք տէ լաւ մը պտտեցէք, պատասխանեց տղան խուզարկիչ ակնարկ մը ձգելով վրաս:

* *

Հետեւեալ առաւօտուն թափառում մըն էր սկսանք Զապէլին հետ: Դեղին եկեղեցին, դպրոցը, մէկ պարտէզէն ուրիշ մը անցելէ վերջ կանգ առինք երկյարկ տունի մը առ-

ջեւ, որուն երեւոյթը դիւրակեցիկ ընակիչներու գոյութիւնը կ'ապահովէր:

Բանջարեղէններու եւ պտղատու ծառերու առաջին պարտէզ մը կար անոր քովը, ու ետեւը ընդարձակ հարթավայրի մը վրայ բլրակներու պէս ցորենի խուրձեր դիզուած էին: Երեք աղջիկներ այդ խուրձերը քակելով կը դարձէին ու քիչ մը անդին գեղեցիկ դեռատի կին մը կ'աշխատէր, եզները լծելու տակը կայծքարերով պատուած լատտի նմանող տակտակներու:

— Շո'ւտ, օրը իրիկուն եղաւ, դեռ կամ պիտի քչէք, կը պոռար Թորոս երկար դաւազան մը ձեռքը բռնած ու գլխուն վրայի գդակը դէպի առաջ ծռած:

— Նայէ՛, եղբայր, ըսաւ Զապէլ, սա գեղեցիկ հարսը Թորոսին կինն է. երկու տարի առաջ ամուսնացուցին: Հոս գեղացիները տարիքի յարմարութեան ընաւ չեն նայիր. աղջիկը այն ատեն քսան տարեկան էր, բայց ծնողքը աղքատ ըլլալուն չկրցան մերժել Թորոսին հօրը, Համբար քէհեային առաջարկը որ կ'ուղէր անպատճառ իր տղուն առնել զայն:

Զարմացմամբ Զապէլին երեսը կը նայէի երբ Թորոս քովերնիս գալով. «Մօ հարս, երկու իսկէմի բեր քի միսարփիրները նստին» պօռաց կնոջը:

Խեղճ կինը անմիջապէս տուն վազեց և երկու աթոռ առնելով մեղի բերաւ:

Երկայն հասակովը, սիրուն դէմքովը, ու բարեհմուտ մարմնովը ֆիզիքական անանկ հակադրութիւն մը կը կազմէր կինը Թորոսին հետ որ արգահատանքի հառաչ մը չկրցայ զսպել:

«Տէր եմ», ըսած էր Թորոս թութակօրէն, ու ծնողքը ապուշ միամտութեամբ ներկայ դնուած էին անոր ուստին, սպասելով որ ընտելիւնը այդ ուժը դնէ անոր մարմնին մէջ:

«Հնազանդ եմ», պատասխանած էր անշուշտ աղջիկը: Իր խոստովին դէմ ըմբոստացում մը չկար թերեւս սրտին մէջ, բայց անձնազոհ համակերպութեան մը ամբողջ տանջանքը կը կարդացուէր իր կուսական ճակտին վրայ:

Ու քահանան օրհնած էր անոնց պսակը, իր ռամիկ տգիտութեան մէջ գուցէ խեղդելով խղճին ձայնը:

Ակնթարթի մը մէջ մտքէս անցնող այս խորհրդածութիւնը բաւական եղաւ որ չուզեմ տեսնել այդ քահանան, զոր ամբողջ դիւղացին եկեղեցիի ամէնէն արժանաւոր պաշտօնեաներէն մէկը կը դաւանէր:

Յոգնած ըլլալս աղէկ պատրուակ մըն էր խուսափելու համար այդ այցելութենէն զոր Զապէլը ընել տալ կ'ուղէր ինծի նոյն օրն իսկ:

— Հոն ալ վաղը կ'երթանք, ըսի ու տուն վերադարձանք:

Յաջորդ առտուն սակայն չկրցայ անկողնէս ելլել: Թեթեւ սառսուռներէ վերջ տաքութիւն եկաւ վրաս: Մարմինս հալոցի մէջ դրուած կապարի պէս կը հալէր կարծես, ու աչքերս այդ տաքութենէն գոլորշիացած ամպերու մէջ կը խաւարէին:

Ուրիշ ատեններ, ամէնէն ծանր հիւանդութեանց միջոցին իսկ առանց տրտունջի համակերպած էի վիճակիս, բայց այդ օրը շատ զօրաւոր ճիգ մը ընելու կըստիպուէի ինքզինքս կարենալ բռնելու համար:

Իժպի պակասութիւնը, երկար ատեն հիւանդ պառկելու վախը, ճամբորդութեանս յապաղման երկիւղը, ամէնքը իրարու միացած՝ ֆիզիքական ցաւերուս չափ բարոյապէս ալ կը տանջէին զիս:

Հիւանդութիւնս լսելով, տունին մէջ ամէնքն ալ տակն ու վրայ եղան: Մօրաքոյրս բաղկերակս բռնած, իր փորձ աչքերով դէմքս աղէկ մը դիտելէ վերջ, «Մի՛ վախնար, տղաս, բան մը չէ, ջերմք բռներ է, երկու օրէն կ'անցնի» ըսաւ, ու աղջիկներուն մէկ երկու պատուէր տալով դուրս ելաւ սենեակէն:

Սակայն տաքութիւնս երթալով կ'աւելնար ու գլուխո ահռելիօրէն կը ցաւէր: Գիշ վերջը ա'լ ինքզինքս կորսնցուցած էի:

Այս վիճակս չեմ գիտեր թէ որչափ տեւեց, բայց երբ սթափեցայ՝ մարմինս քրտինքներու մէջ կը լողար ու քացախի բարկ հոտ մը

ռունգերս կը խայթէր: Թէև քիչ մը տենդ կար վրաս, բայց զեփիւռի պէս դէմքս շոյող թեթև հով մը կարծես կեանք կը պատուաստէր ցաւէն ընդարմացած մարմնիս մէջ:

Ինծի անանկ եկաւ որ միս մինակ էի սննեակիս մէջ, շունչի թեթև հետք մը իսկ չէր դար ականջիս. բայց հաղիւ թէ գլուխս վեր առի պատուհանէն դուրս նայելու համար, աչքերս հանդիպեցան դէմքին դեռատի աղջկան մը որ հողմահարը ձեռը, պահապան հրեշտակի մը պէս նստած էր սնարիս վերև:

Երազ մը չէր տեսածս, աղջիկը հոն էր գլխուս վերև, և թէև առաջին անգամն էր որ զինքը կը տեսնէի, բայց իր աղուոր աչքերը այնչափ կը նմանէին սիրելագոյն էակի մը հոխոյի աչքերուն որ, չփոթած, անկարելի եղաւ ակնարկս բաժնել իր ակնարկէն:

Դարձեալ Զապէն էր որ եկաւ զիս չփոթութենէս աղատել: «Վարդուկ, դուրս գնա՛, մայրս քեզ կ'ուզէ» ըսաւ ու անոր հետանալէն վերջ առանց ժամանակ թողելու որ իրեն բան մը հարցնեմ, ինծի դառնալով «Անհամբեր մի՛՛ ըլլար, եղբայր, վերջէն կը պատմեմ թէ ո՞վ էր հիւանդապահուհիդ, նախ ըսէ թէ ինչպէ՞ս ես, բաւական վախցուցիր մեզի: Իրաւ է թէ բան մը չէր. ջերմը չատ սովորական հիւանդութիւն մըն է հոս, բայց բժիշկ չունինք, ատիկա միայն հոգ ըրինք, մեր բժիշկը բնութիւնն է, նայէ քիչ մը քացախով և ուռիի տերեւներով քեզի բժշկեցինք: Ախո՜թակդ ինչպէ՞ս է, մայրս քեզի համար սղուոր մօի ջուր պատրաստած է»: Բայց տեսնելով որ ես անհամբերութենէս կը հտտնէի. «Հո՛ւ, հասկցայ, ըսաւ, մինչև որ հիւանդապահուհիդ պատմութիւնը չընեմ, բերնէդ պատասխան մը առնել կարելի չպիտի ըլլայ: Ուրեմն մօիկ ըրէ՛»:

ՇԱՀՈՒՐԱՄ

21 Օգոստ. 1904

Ալէմտաղ

(Բ եւ վերջին մասը յաջորդով)

ՆՈՐԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

ՕՇՕՇՈՇ

Օրօրոցը կը տատանի մեղմօրէն,
Անկարեկիր մանուկին սուր ձայներուն
Մինչ կը մարի կանթեղին լոյսն երերուն,
Օրօրոցը կը տատանի մեղմօրէն:

Ու կը մարի կանթեղին լոյսն երերուն
Լուսածրար փայլուն աչուին արծաթէ,
Իր խոնջէնքին լուրթ ալքերը կը կաթէ,
Մինչ կը նիրհէ անմեղ մանկիկը սիրուն:

Ձինջ օրոցքը ատ նորածիկ կոկոնին
Կուղէ ննջել ինքն ալ յողնած ու դադրած,
Եւ կը մնայ պարապին մէջ մըթամած
Ձինջ օրոցքը ատ նորածիկ կոկոնին:

ՄԻՆԱՆ ՊԱՇԵԱՆ

Գ Ա Տ Ը Գ Ի Ի Ղ Ի

ՄԵԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Կը բացուի սեպտեմբեր 6/19ին: Ունի մէկ տարի նախալրթարանի և՛ եօթը՝ կրթարանի շրջան մը: Յետոյ ուսանողք եթէ յարմար դատուին՝ կը զրկուին Վենետիոյ Բարձրագոյն Վարժարանը և անկից Եւրոպայի արուեստիկ համալսարաններ: — Լեզուներէն կ'աւանդուին Թուրքերէն, Հայերէն, Դաղդիերէն (նաև խօսելուն պարտաւորիչ), Իտալերէն, Գերմաներէն, Անգլիերէն: — Ուսմանց ծրագրին մէջ կան նաեւ ձայնական եւ դորժական երաժշտութիւն, մարմնամարզ եւ առողջապահութիւն: — Վարժարանը ունի քսան ուսուցիչներ ներքին եւ արտաքին, Պոլսոյ կարողագոյն դասատուներէն ընտրուած: — Իր ծովահայեաց անհամեմատ գիրքէն զատ՝ չէնքին վրայ այս տարի կրեց կարեւոր փոփոխութիւններ՝ առողջապահութեան աւելի եւս նպաստելու համար: — Փափաքողաց կը զրկուի Յայտագիրը:

2—10

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՏՈՒԾ ԹԱՇԿԻՆԱԿԸ

թ. 2

Քարգամիշ. ՊԱՐԷՏ

Հեղինակ. ԽԱԼԻՏ ԶԻԱ ՊԵՅ

Ֆէրիտէն հոն էր: Զիս այս ընտանիքին ներկայացնող բարեկամիս թեւը՝ դիմացս կեցած՝ այս գիշերուան պարէն շատ զուարճանալը յայտնող ժպիտով մը ինծի նայելով, կ'ըսէր.

— Ե՞րբ եկար. հիմայ կարծեմ:

Զեռնոցներուն մէջ հաւքուած, աւելի մտուտ երեւցող ձեռքը զոր ինծի երկարած էր, սեղմելով. — Քիչ մը առաջ... ըսի:

Հիմակ, մենք, դրան և երկսեռ խումբի մը մէջ սեղմուած՝ նեղ չըջանակի մը մէջ բանտարկուած էինք: Այս իրիկունը Ֆէրիտէն ո՛րչափ սիրուն էր: Ես բարեկամիս պարասպ հարցումներուն, այս տասնըութ տարեկան զուարճախօս աղջկան քահքահներով խառն խօսքերուն պատասխանած միջոցիս, զինքը կը դիտէի: Գիտէի որ այս աղջկիկը, ինծի հետ խօսելու, ընտանիքիս վարուելու տկարութիւն մը ունէր: Մեր բոլոր յարաբերութիւնը՝ երկու անգամ տուններին ընդունուելէ, Քեի պառնայներուն հինգ-տասն անգամ գլխու հակումներով զիրար բարեկէլէ, և գիշեր մըն ալ Ալիամպրան, քիչ մը վրան բաց կատակերգութիւն մը դիտած միջոցիս, զիպուածով իր աթոռին առջևս գտնուելէն կը բաղկանար, մինչդեռ այս իրիկուն զոյգ մը հին բարեկամներու պէս կը տեսակցէինք: Պահ մը. — Այս գիշեր ո՛րոնց հետ կը պարէք... ըսաւ: — Պարէն այնչափ չեմ ախորժիր, պատասխանեցի. արդէն նոր եկած էի, բայց եթէ մէկուն չը խօստացուած պար մը ունիք:

Այն ժամանակ, — կարծեմ թէ այդ առաջարկութեանս կըսպասէր, — չփակէն՝ ծայրը մեծ տաքէ կապով մը կապուած մինիսիկ մատիտը օրորուող տետրակը հանելով ինծի երկարեց: Այս պղտիկ տետրակին մէջ մինակ Սօթիլ մը և երկրորդ Քատրիլը մնացեր էր: Աչքերուն նայելով և այս պարասպ տեղը ցուցնելով, — Ասո՛նք, եթէ կը հաւանիք... ըսի: — Ան,

անմիջապէս մատիտը առնելով. — Ամենայն սիրով, ըսաւ: Յետոյ աւելցուց. — Այս առաջին դատրիլին կրնայիք մէկու մը հետ քովերնիս գտնուիլ: — Ոչ, պատասխանեցի խնդալով, ձեզի դիմացէն դիտել կուզեմ: Այո՛, հիմակ ալ, սպանիացի գեղչուհիի մը հագուստով, արաբական գեղեցկութիւնը, անտալուզեան տարազը, արեւելեան ուրիշ տեսակ աղուորութիւն մը տուած էին այս աղջկան, երազներու մէջ տեսնուած պատկերներու պէս. հիմայ ալ Ֆէրիտէն կուզէի դիմացէն դիտել:

Մինչև ծունգերը երկարող, կարմիր մետաքսէ լարերով կապուած բաց դեղին մետաքսէ շապիկը կուրծքին տակ բաց պահող սև թաւիչէ հագուստ մը հագած էր: Գլխուն վերեւօքը լայնկեկ, դարձեալ սև թաւիչէ գդակ մը կար, որ դէմքին մէկ մասը բազմաթափար շուքի տակ կը ձգէր: Այս կարճ հագուստին քղանցքը և կլոր գդակին շուրջը օղակներով բոլորակի սիրունիկ ոսկիներ կը կախուէին ու այս դեռ մանուկ աղջկան միշտ շարժուն մարմինով գլուխը երեքցած միջոցին քղանցքը և գդակը մարդուս այնպիսի ոսկեայ թեթև թրթռումներ լսելի կ'ընէին, զորս առասպելային սիրոյ մը մրմունջը կարելի էր համարել:

— Որքան սիրուն քոյրեր, կ'ըսէի ինքնիրենս. մէկը, փառայեղ ու ծաղկապատ բանաստեղծութեան մը ձեռով՝ գեղեցկութեան անդրի մը, միւսը կարճ սև հագուստէն յորդող զուարթ բնութեամբը՝ երիտասարդութեան խինդը զանգակներով ձեղ ձայնող մարմնացեալ քեքեւանքը...

Հիմակ Քատրիլին առաջին նուագումը՝ բոլոր պարողները մեծ սրահը հաւքած էր: Փայլուն սև գլաքը ձեռքը, օձիքին վրայ ծոպաւոր մետաքսի լարերէ գոյնզգոյն նշան մը կրող պարի վարպետը, լայն շար-

ժուռներով, բարակ կօշիկներուն ծայրովը փայլուն տախտակամածին վրայ — սահելով, զոյգ մը հոս, զոյգ մը հոն տեղաւորեց, վերջին ակնարկ մը նետեց ու փութկոտ ձայնով.

— Տիկնայք... տեարք... պատրաստուեցաւ ըսելու:

Ֆէրիտէ ճիշդ դիմացս կը կենար: Դէպի առաջ նետուելու համար, պզտիկ ոտքերուն խաղալը կը տեսնէի: Առդին՝ ձէմիլէ, զիս գլխով և անուշ ժպիտով մը բարեւելէ վերջ, չարժեղու պատրաստ կեցաւ:

— Առաջ:

Այն ժամանակ, երկու հակառակ գիծեր չարժման եկան: Գոյները, գլուխները խառնուեցան ինչ լաւ տեսարան մը կը պատրաստուէր: Բայց ճիշդ նոյն ժամուն, ուսիս ձեռք մը դպաւ:

— Դո՛ւք ինչո՛ւ չէք պարեր:

Ընտանիքին հայրն էր, կարճ հասակով, լայն ուսերով և ֆրաքին մէջ անհանգիստ մարմնով մարդ մը:

— Կ'երեւայ թէ դուք ալ իմ գաղափարէս էք... բայց ձեզի բան մը հրամցնեմ, ի՞նչու ոտքի վրայ կը մնաք, կըսէր:

Այս չափազանց հաճոյակատար տան տիրոջ հետեւի հարկ եղաւ: Զիս դէպի պիւֆէն կը քաշկրտէր. ես ալ իր հայրական հպարտութիւնը շոյել ուզեցի. — ձմարիտը շնորհաւորելի էք, շատ ճաշակաւոր հանդէս մը սարքած էք. երեկոյթին երջանիկ պատճառը մանաւանդ ձմարտապէս շնորհաւորելի է:

Գիտէի առաջունէն, որ այս երեկոյթը, քիչ առաջ տեղի ունեցած ձէմիլէի ամուսնութեանը առթիւ էր: Տան տէրը ինծի գաւաթ մը քոնեագ և ֆոնտան մը երկաւրելով.

— Այո, շնորհակալ եմ, կըսէր, հօր մը ամենամեծ պարտականութիւնը աղջիկներուն երջանկութեան աշխատիլն է: Առջինին համար ունեցած պարտքս կը յուսամ որ կատարեցի: Գալով երկրորդին...

Կեցաւ: — «Այն ալ նշանելու վրայ ըլլանիդ լսեր էի» ըսի:

Ծերունին՝ պատասխան չտուաւ, չթուեց. ներու ծամածուռ մը ունեցաւ. որ կարծես միտքէն անցածը կուզէր հասկցնել. յետոյ,

բոլորովին պատասխան չիտուած չըլլալու համար. — Այո՛... ըսաւ:

Ա՛լ ես, զրկուած սիրուն տեսարանիս փոխարէն, այս հայրը խօսեցնել տալ կ'ուզէի. իսկ ան, երկրորդին վրայօք չի խօսելու համար, միշտ առաջինին վրայ կը խօսէր: Փեսան լաւ կրթուած, գործի մէջ մեծցած, պատուաւոր ընտանիքի մը զաւակ, անցեալը մաքուր երիտասարդ մըն էր: Վերջապէս այս էր, այն էր, բայց Ֆէրիտէին խօսքը չըկար: Վերջը հաճոյակատարութիւնը աւելի առաջ տանելով, յետամնաց կնոջ մը ներկացուց զիս յաջորդ պարին համար: Պարերու առեն մէկ կողմ մնացած կիները գիտէք: Այն գիշերուան բարկութեանս՝ այն պահը լուռ անցնինք:

Պարերու առջի մասը լմնցեր էր, հիմակ ամէնէն ալ հոս հոն, կիները իրենց արդու զարդը նորոգելու համար զարդասենեակը կամ ուժ առնելու համար պիւֆէն, էրիկ մարդիկ կա՛մ ծխասրահը և կա՛մ թղթախաղը զիտելու, ոմանք ալ կիներու հետ պիւֆէն կամ անկիւն մը մասնաւոր խօսակցութեան մը կը փութային երթալ:

Ձէմիլէն՝ լամբակին կարմիր մետաքսէ ժանեակէն պաշտօնական անձ մը ըլլալը հասկըցող ճերմակ մօրուքով մարդու մը թել՝ անկիւն մը առաջնորդուած միջոցին, Ֆէրիտէն՝ սուր պիւսերով, կտրած մօրուքով երիտասարդի մը պատմութեանէն շատ զուարճացած ըլլալու երեւոյթով աղմկալից քրքիշներով պիւֆէն կը վազէր...

Ես, այդ միջոցին, առջեւէս անցնող բարեկամիս թեւէն բռնելով. — Մինա՛կ ես. — Այո՛, սիկառ մը ծխելու համար կը փախչիմ կոր. կուզա՞ս ինծի հետ: քեզ հավանա մը մեծարեմ, ըսաւ:

Վայրկեան մը վերջ, ծխասրահին մէկ անկիւնը կձկտուած էինք: Ծխախոտի ծուխին մէջ խօսակցելու չափ անուշ շատ քիչ բան կայ, կ'երեւակայեմ:

Մէտուտ խուրդէմ պէյ, հոս, գրպանէն հանած տուփէն, մատովը էն կակուղ սիկա-

րէթը վառելէն վերջը, ճերմակ ծուխն մէջէն չարունակեց:

— Ֆէրիտէին խնդիրը ինծի մեծ հետաքրքրութիւն պատճառ էր, ինքնիրենս «Խնչո՛ւ հայրը անոր համար բան մը չըսաւ» կ'ըսէի: Ասկից անկից խօսելէ վերջ, քիչ մը կարգը այս ընտանիքին բերելով հարցուցի: Բարեկամս:— Ֆէրիտէն, ճգեցէք սա պզտիկ խնդը, մեղք պիտի ընէ իրեն, լսաւ:

— Խնչո՛ւ, հարցուցի:

Բարեկամս բոլոր գիտցածը պատմեց ինծի:

— Ֆէրիտէն մեծ քրօջը ամուսնութենէն վերջ զարմանալի գաղափար մը ունեցեր էր, ինչո՛ւ ան հարս ըլլայ և ինք մնայ. դեռատի աղջիկները անգամ մը որ այսպէս մտածեն, ա՛լ անկարելի կ'ըլլայ այդ գաղափարէն զիւրենք հրաժարեցնել: «Շատ աղէկ, քեզ ալ ալ ուզող մը եթէ գտնուի» կը պատասխանուի Ֆէրիտէի: Ուզող մը չուշանար, և կարծեմ նշանած մը գտնելու համար այդ պզտիկ սատանան ինքն ալ քիչ մը աշխատած է: Այդ երիտասարդը հօրը լաւ երեւցաւ, տունը ընդունուեցաւ, երկու ամիս, չորս ամիս և վերջապէս պաշտօնապէս Ֆէրիտէին նշանածի ա տունը առաւ: Բայց գիշեր մը հայրը սոսկալի բարեկութեամբ մը տուն վերադարձաւ: «Ֆէրիտէին նշանածը ըլլալիք այդ սրիկան անգամ մըն ալ հոս ոտք չը պիտի կոխէ» կ'ըսէր: Անոր վրայօք ճշգրիտ տեղեկութիւն տալիք բարեկամ մը գտնուեր էր վերջապէս: Անիկայ սրիկայ մը խայտառակ մը, խաղամոլ մը, գինով մըն է, ըսուած էր: Եւ անա՛ Ֆէրիտէն ալ ըմբոստ, հիւանդ, յուսահատ...

Վերջապէս հայրը ճար մը գտնել խորհեցաւ. փեսացուն վռնտելու գաղափարը մէկգի ըրաւ, ու տասնըհինգ օր ևս ընդունեց տունը: Աւելի վերջը, իր ապագայ փեսան իր գործերուն վարժեցնելու գիտում ունենալը և գործի մը առթիւ Եգիպտոս ղրկելու ղեկը յայտնեց: Ահա չորս ամիսէ ի վեր Ֆէրիտէին նշանածը Եգիպտոս է: Վերջը ինչ պիտի ըլլայ, ապահով եմ որ հայրն իսկ չը գիտեր: Աւասիկ Ֆէրիտէին պատմութիւնը...

Պարերուն երկրորդ մասը սկսած էր: Հի-

մայ թէ և դեռ եռանդոտութիւն մը չկար, բայց դադարներէ վերջ սովորական եղող աւելի ջերմիկ դուարթութիւն մը կը տիրէր: Ես, դարձեալ յետամնացի մը չը մնալու համար, հեռուները կը պտտէի: Փանի սօթիչը մօտենար, սիրտս աւելի սաստիկ կը տրոփէր: Ինքնիրենը նշանած մը ճարող այս աղջկան հետ առջի պարը՝ զիս տղու մը պէս կը դողդողացնէր: Վերջապէս, այո, վերջապէս...

Հիմակ Ֆէրիտէն թեւս էր. — «Օ՛հ, որչա՛փ յոգնեցայ... որչա՛փ յոգնեցայ...» կ'ըսէր: — Բան մը առէք եթէ կ'ուզէք: — Գէշ չ'ըլլար ըսաւ: Չայն մինչև պիւֆէն տարի: Ինչ կ'ուզէք, ըսի: Գոնեաք մը... ըսաւ: Լեցուցի տուի, իր սիրուն մետաքսէ թաշկինակը դաւաթին տակը բռնելով զայն չրթունքին տառաւ: Այդ միջոցին, քիչ մը չափէն աւելի մօտէն անցնող մարդու մը կ'ունակը արմուկին զարնուեցաւ: Գոնեաքը ծնօտէն վար, պարանոցը և աւելի վար վար սահեցաւ, թափուեցաւ... Ֆէրիտէ խնդալով՝ «Գոնեաքը փառաւորապէս խմեցի, կ'ըսէր: — Թրջուեցաք, ըսի: Ան այս գէպքէն չէր բարկանար, ընդհակառակը, զարմանալի կը գտնէր զայն ու խնդալով կ'ըսէր «Թրջուիլը բան մը չէ, բայց գիտնաք, թաց թաց հագուստը մարմնոյս դպած միջոցին որչա՛փ գէշ կ'ըլլամ կոր...» — Պիտի մսիք, ըսի, դոնէ մէջտեղը թաշկինակ մը դրէք»: Մեղքնալու երեւոյթով մը, պզտիկ բանուած թաշկինակին նայեցաւ: Կուզէք ձեզի թաշկինակ մը տամ, ըսի: Գրպանս՝ դեռ չը գործածուած, եղերքը լեղակագոյն, մէջը՝ ճերմակի վրայ նոյն գոյնով, մեծ, իրարու անցած օղակներով, կտաւէ աղուոր թաշկինակ մը ունէի: Չայն հանելով իրեն երկարեցի: Դուք ինչ պիտի ընէք, հարցուց: — Ես ուրիշ մըն ալ ունէի: Վերջապէս «չնորհակալ եմ» ըսելով առաւ. ծնօտը վեր առնելով նեղ օձիքէն վար, հրելով ու հրելով վերջապէս թաց տեղը տեղաւորեց թաշկինակը: Հեռուէն, սօթիչին առջի եղանակները կը լսուէին: — Շուտ, շուտ, չը պիտի կրնանք հասնիլ ըսելով, զիս քաշկրտեց և միասին՝ հիմակ քիչ մը ուսերնիս իրարու հպած՝ սօթիչի ալեծածան եղանակին անձնատուր եղանք:

(Շարունակելի)

Գ Պ Ր Ո Յ Ը

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՆՉ ԴԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԷ

Յաճախ հարցուած է թէ նախնական դպրոցը ընկերային ի՞նչ դեր կը կատարէ։ Ոմանք կ'ըսեն թէ փնասակար արդիւնք մը առաջ կը բերէ, քանի որ տղաքը կը չեղեցնէ իրենց ծնողքներու կիրարկած արհեստներէն, մանաւանդ երբ անոնք հողագործ են։ Այսպէս գրասենեակի գործերու հետամուտ կ'ըլլան այդ տղաքը, դատապարտուելով կէս անօթի մնալու, դասադուրկներ ըլլալու։ Ուրիշներ ալ կը պաշտպանեն դպրոցը։ Բայց այդ օղային հակաճառութիւնները մեծ բան մը չեն ապացուցաներ։ Միայն սա կը հաւատեն թէ առաջինները կուսակից են պարտաւորիչ կրթութեան, իսկ վերջինները՝ հակառակորդ։

Մերթ կը հարցնեն տղոց թէ ի՞նչ ասպարէզի հետեւիլ կ'ուզեն դպրոցէն ելլելուն։ Ու տրուած պատասխաններուն վրայ կը հիմնուին։ Իբր թէ ըստ բաւականին լուսաբանուած պատասխաններ ըլլային ատոնք ու անպատճառ անկեղծ ոգւով տոգորուած։ Յաճախ ո՛չ մէկն է և ոչ ալ միւսը։ Տղան կը պատասխանէ խելքին փշածը, կամ թէ շատ ճարտար, նպաստաւոր պատասխանով մը կ'ուզէ լաւագոյն դադափար մը կազմել տալ իր մասին։ Պորտոյի համալսարանին մէջ ընկերաբանութեան բրոֆէսէօր Պ. Բօլ Լաբի կը փորձէ քիչ մը լոյս սփռել այս միջին խնդրին վրայ, հանճարեղ ու զգուշաւոր մեթոտ մը կիրարկելով, զոր կը բացատրէ ու արդիւնքներն ալ կը պարզէ Ռեվիւ Սիան քիֆի մէջ։

Այդ մեթոտը կը կայանայ մէկ դպրոց ուսումնասիրելուն մէջ։ Ակներև է թէ այդ մեթոտով կարելի չէ ընդարձակ եզրակացութեանց յանգիլ։ Պ. Լաբի կանխաւ ընթերցողին իմաց կուտայ այդ պարագան։ Բայց եզրակացութեան անձուկ սահմանը կը փոխարինուի բաղդատական ճշգրտութեամբ մը։ Եթէ երբեք Պ. Լաբիի հետեւողներ գտնուին, եթէ երբեք գտնուին բանիմաց դաստիարակ-

ներ, քաղաքապետարանի քարտուղարներ, որոնք նմանօրինակ վիճակագրութիւններ պատրաստեն զանազան կէտերու վրայ, այնպիսի տեղերու մէջ, որ իրարու չեն նմանիր ո՛չ ֆիզիքապէս, ո՛չ տնտեսապէս և ոչ ալ բարոյապէս, թերեւս կարելի ըլլայ օրին մէկը կարծիք յայտնել անոնց վրայ։ Պիտի առարկէք. եթէ երբեք դպրոցը գէշ աղղեցութիւն մը ունի, մինչև այն ատեն պիտի չարունակէ իր այդ աղղեցութիւնը։ Ակներև է ատիկա։ Բայց այս պահուս խնդիրը չի դառնար դպրոցին ընկերական դերը որակելուն վրայ, այլ ճանչնալ զայն։ Չեմ կարծեր որ, այդ դերը ճանչնալու համար Պ. Լաբիի ի գործ դրած միջոցէն աւելի խղճամիտ ու ապահով միջոց մը գտնուի։

Մասնաւոր անձնական պարագաներու շնորհիւ Պ. Լաբի կրցած է շատ մանրակրկիտ ու խղճամիտ քննութիւն մը կատարել Էյի (Մարն) հանրային դպրոցին մէջ։ Ուզած է գիտնալ թէ ի՞նչ եղած են 1872էն մինչև 1893 դպրոցէն ելլողներ. 1904ին, այդ աշակերտները չափահաս եղած, զինուորական ծառայութիւնին կատարած ու վերջնական արհեստ մը ընտրած են։ 1872-1898՝ Էյի դպրոցէն ելած են 722 տղաք. Պ. Լաբի մանրամասնօրէն գիտէ այդ 722 տղոց պատմութիւնը, մինչև 1904 թուականը։ Ծնողքներուն զբաղումն ալ գիտէ։ Այսպէս բաղդատական ցուցակներ կը չինէ, մեծապէս շահեկան ինքնին, որոնց խմաստը պիտի պարզենք։

Այդ ցուցակները կը հաստատեն թէ այգեմշակութիւնը—էյ չամբանեա պատրաստողներուն մայրաքաղաքն է—1872էն 1893՝ աւելի փլաս կրած է քան թէ չահած։ Դպրոցի հակառակորդներուն ձեռքը սքանչելի փաստ մըն է ասիկա։ Բայց կը սխալին իրենց կարծիքին մէջ։ Եթէ անոնք չբաւականանան խառն թիւ մը կարգալով, այլ փորձեն մեկնութիւն մը տալ անոր, այն ատեն պիտի տեսնեն որ դպրոցը չէ յանցաւորը, այլ տընտեսական տաքնապը։ Դպրոցը միայն ի վիճակի կը դնէ տղան՝ ընտրութիւն մը ընելու ձեռական ու գրասենեակի զբաղմանց միջև։

Մնաց որ, այդ զբաղումները յաճախ ապ-
րուստ ճարելու միջոց մը եղա՛հ են աղքատ
ընտանիքներու տղոց համար, մինչև որ զի-
նուորական ծառայութեան ատենը դայ ու ի-
րենց կայութիւնը փոխէ: Ժողովուրդի տղաք
քանի մը տարի կը մնան հարկահաւաքութեան,
բարապանութեան, կամ քաղաքապետութեան
պաշտօնարանի մը մէջ, ինչպէս ուրիշներ
քոչէժը կը մնան մինչև չըջանին աւարտելը,
թէև ոչ մէկ ասպարէզի չեն պատրաստուիր
և այս պատճառաւ ստիպուած չեն ուսումնին
աւարտելու: Հոս կը սահմանափակուի դըպ-
րոցին ընկերական ազդեցութիւնը, յիշեալ
դպրոցին մէջ, որոշեալ ժամանակամիջոցի մը:
Քիչ մը աւելի ընդլայնելով չըջանակը, կը
հանդիպինք ամէնէն համեստ ընտանիքներու
տղոց: Բաղդատաբար անփոփոխ եղող թիւի
մը համաձայն, այն երիտասարդները որոնք
դպրոցէն ելլելուն քսան-երեսուն տարի
յետոյ հանրային պաշտօններ կը վարեն, այդ
բանը կը պարտին դպրոցին, լաւ աշխատած
ըլլալուն: Զրի ուսում առած ու ամենաբարձր
աստիճանները ձեռք ձգած են, իրենց ծնողք-
ներէն աւելի լաւ դիրքերու տիրանալով:
Հոս կանգ կ'առնէ ընկերաբանը ու կ'եզրա-
կացնէ. «Դպրոցը երբեմն կը յաջողի խզել
ցանցին հիւսուածքները, որուն մէջ կայկան-
դուած էին մարդկային ճակատագիրները՝
անտեսական պայմաններու պատճառաւ»:

Նաև կ'եզրակացնէ թէ դպրոցը բոլորովին
անարժէք բան մը չէ, թէև մեծ ազդեցու-
թիւն մը չունենայ: Ու յետոյ սա խորհրդա-
ծութիւնը կ'ընէ, թէ աւելի մեծ դեր մը
չպիտի կատարէ դպրոցը, եթէ երբեք հիմակ-
ունէ աւելի գիտակից կերպով չպատրաստէ
տղաքը, կեանքի պայքարին մէջ յաջողելու
համար: Մարդկային ընկերութիւնը միթէ չի՞
կրնար օգտուիլ այն իմացականութիւններէն
զորս դպրոցը կ'արթնցնէ: Պ. Լարի թուա-
նշաններ առաջ կը բերէ: Էյի դպրոցը յաճա-
խած 772 տղոց մէջ 40 լաւագոյն աշակերտ-
ներ ելած են. այս վերջիններէն 8-9ը միայն
իրենց ծնողքներէն աւելի աղէկ դիրք մը
գրաւած են. 14ը միայն կրցած են շարունա-
կել իրենց ուսումը որոնց 8ը ձրի կրթաթո-

շակներու շնորհիւ: Իր ընկերներուն չափ
բանիմաց ու աշխատասէր եղող ուրիշ աշա-
կերտ մը, որ ուսուցիչի կամ ճարտարագէտի
վկայական առած է, հիմա գինիի շիշեր կը
խցէ գինեվաճառի մը նկուղներուն մէջ:
Մտաւորական ուժի կորուստ մը չէ՞ ասկա:
Մնաց որ, ընկերական տեսակէտին առնթեր
կայ անհատական տեսակէտը: Ի՞նչ միջոց
ունինք գիտնալու թէ ո՞վ աւելի երջանիկ
է, աղքատական ասպարէզի մը հետեւողը թէ
շիշերուն բերանը խցողը: Բայց ասիկա չատ
հեռունները պիտի տանէր մեզ:

(Թան)

Օրիորդ Թէոփիսեա Թօքաթեան, Տիար
Տիգրան Թօքաթեան, Տ. և Տիկին Յովսէփ
Թօքաթեան և զաւակները, Տիար Յարութիւն
Թօքաթեան (Մանչէսթր), Օրիորդ Ռէժին
Թօքաթեան, Այրի Տիկին Մարիամ Բ. Ալի-
նախ և զաւակները, — Տ. և Տիկին Թադէոս
Ալինախ (Մանչէսթր), Տ. և Տիկին Գրիգոր
Թամիրեանց (Ֆիլիպէ), — Տ. և Տիկին Ռուբէն
Էպէեան և զաւակները, Տ. և Տիկին Միհրան
Կեսարեան և զաւակները, Տ. և Տիկին Տօքթ.
Վարդաղարեան կը ծանուցանեն դառնաղէտ
կորուստը զոր ունեցան. յանձին իրենց սիրեց-
եալ եղբոր

ՏԻԱՐ ՄԱՐՏԻՐՈՍ ԹՕԲԱԹԵԱՆԻ

որ կնքեց իւր մահկանացուն ի Մանչէսթր
25/7 Օգոստոսին:

Ազգականք և բարեկամք կը հրաւիրուին
յուզարկաւորութեան տնուր հանդէսին որ
պիտի կատարուի 4/17 Սեպտեմբեր, Շաբաթ
օր, Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյն
մէջ, ուր կը գտնուի արդէն հանգուցելոյն
մարմինը, ուսկից փոխադրուելով Շիշլիի Ազգ.
Գերեզմանատունը՝ պիտի ամփոփուի ընտան-
եաց յատուկ դամբարանին մէջ:

Հոգեհանգստեան Պատարագը պիտի սկսի
ժամը 2 1/2ին և յուզարկաւորութեան հոնդէսը
ժամը ճիշդ 4ին (Ը.Թ.):

Կ. Պոլիս, 1/14 սեպտեմբեր 1904

Կը խնդրուի ծաղկեպսակ չղրկել:

ՀԱՅ-ՀՈՒՍԷԱԿԱՆՍՑ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ



Հայ Հռոմէականաց Կ. — Պատրիարք Տ. Պօղոս Սապպաղեան Սրբազանի կաթողիկոսական օրհնութեան հանդէսը կատարուեցաւ կիրակի օրը, Բերայի Ս. Աստուածածին աթոռանիստ եկեղեցւոյն մէջ, այդ կրօնային արարողութեան յատուկ հանդիսաւորութեամբ որուն կը մասնակցէին մայրաքաղաքս գտնուող տաանքմէկ եպիսկոպոսները, վանական միաբանութեանց ներկայացուցիչներ, եկեղեցիներու մեծաւոր վարդապետներ և այլն: Եկեղեցին լեցուած էր երկսեռ ժողովրդեան խառն բազմութեամբ: Դասը յատկացուած էր եկեղեցական հրաւիրեալներու, իսկ դասին ետին՝ պաշտօնական անձնաւորութեանց, դեսպանատանց թարգմաններու և ուրիշ աշխարհական հրաւիրեալներու:

Օրհնութեան մեծաշուք հանդէսին կատարումէն և հանդիսաւոր Պատարագէն ետք զոր մատոյց Կ. — Պատրիարքը, Ն. Սրբազնութիւնը եկեղեցւոյ բեմէն գրաւոր բանաստեղծութիւն մը կարդաց զոր վերջացուց՝ ջերմագին բարեմաղթութիւններ ընելով Վեհ. Կայսեր արեւշատութեան համար, որոնց «ամէն»ներով ձայնակցեցան բոլոր ներկաները: Յետոյ, թափօրով առաջնորդուեցաւ Պատրիարքարանի դահլիճը ուր զինքը ընդունեց Կրօնից Տեսուչի օգնական Դ. Սեմ. Պէհա պէյ, — որ արարողութիւններէն առաջ եկած էր արդէն և ներկայ գտնուած էր եկեղեցական արարողութեանց — ի ձեռին ունենալով Կայս. բարեհաճ Ֆէրմանը, որով Վեհ. Սուլթանը կը հաստատէր Տ. Սապպաղեան Ս. Հայրը, իբր Կ. — Պատրիարք Հայ-Հռոմէականներու: Պատրիարքը ձեռնամած և յօտնկայս ընդունեց Կայս. Ֆէրմանը, և սրտաբուխ մաղթանքներ ըրաւ Կայս. արեւշատութեան համար: Ուրախութիւնը և ոգեւորութիւնը մեծ էր այս շնորհին առթիւ:

Փաստաբան Թընկըր Սիմօն էֆ. բանաստեղծութիւն մը արտասանելով՝ Տ. Պօղոս Պատրիարքի պաշտօնը վաւերացնող Կայս. Իրատէին շնորհուած ըլլալուն առթիւ բա-

րեմաղթութիւններ ըրաւ Կայսերական արեւշատութեան համար, որոնց ձայնակցեցան ներկաները ու ծափահարեցին:

Բանաստեղծ Նաւ Հ. Գաբրիէլ Ծ. Վրդ. Մէնէվիչեան՝ որ շնորհաւորութիւններ յայտնելէ ետքը, ի մէջ այլոց չեղանց՝ Պատրիարքարանի յատուկ կրօնաթերթի մը և գրականութեան մղում տրուելու պէտքը:

Հանդէսը վերջացաւ բարեմաղթութիւններով և շնորհաւորութիւններով:

ՎԻՆՆԱԿԱՆ ՄԻԻԹԱՐԵԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ԲԱՆԱԿԱՆ ԴԱՐՈՒՄ

48-րդ ՏԱՐԵՇՐԱՆ

Վարժարանս վերստին կը բացուի 1/14 սեպտ. 1904:

Վարժարանս ունի արդի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne, Realschule) Ծրագիրը՝ միջավայրիս պիտոյիցը յարմարեալ:

Լեզուներ. — Հայերէն, Թուրքերէն, Գաղղիերէն, Գերմաներէն, Անգլիերէն: Գիտութիւններ. — Ուսողական, բնագիտական, բնապատմական, պատմական, (կ'աւանդուի. Գաղղ. եւ Գերմ. լեզուներէն):

Աւելցրակաճ Աշխարհագր. Թատարան. Թղթակցութիւն (Գերմ. Գաղղ. Անգլիերէն):

Ուսուցիչներ. — Ներքին եւ արտաքին՝ 20 ուսուցիչներ պիտի դասաւանդեն:

Նորոգուած աշակերտաց ընդունելութիւնն Օգոստ. 16էն կը սկսի:

ՎԱՐԺԻՉ

Հ. ԳԱՐԻԷԼ Ծ. Վ. ՄԵՆԵՎԻՇԵԱՆ

5-10

ՎՐԻՊԱԿ. — Նախորդ թիւով, Պոլսոյ Ֆէսսեան դեղարանին նկատմամբ մեր ըրած հրատարակութեան մէջ, այդ դեղարանին տիրոջ անունը սխալմամբ Արիս էֆ. գրուած էր՝ փոխանակ Սաչիկ էֆ. Ֆէսսեանի:

Հիմնադիր-Արտօնաճիւղ Կ. Ս. ԻԻԹԻԻԶԵԱՆ Պատասխանատու-ՏԵՐԵՆ ՏՈՒԹ. ԵՂ. ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՆԵԼԻՔ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԻՆՆԻ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 ժամանակ 20-ի կայսր Ուլադիսլավ արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԻՆՆԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ- ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵԿԱՌՔՈՎ ՈՒՂԵՒՈ- ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կա- րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

314,768,000

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տակոս

56,585,800

Ամէն տեսակ անդեկութեանց դամար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվատա, Ղալաթիա,

8-10

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՎԻԲՐՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ բուսակի երկրեր

VICTORIA

ՎԻԲՐՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ Կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛

DE

Բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան

BERLIN

Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւնն-

րուն վճարումները չաբաթական մասնավճարներով անդի կուենան,

սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին " 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-

այկառն եւուդական սր ավերով

կառավարութեան հսկողութեան ներ-

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայսր Պանքա

Եւ Բեռլին Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԴԱԼՖԱՅԵԱՆ

Տեսուչ

Պոլիս Քաթրեքթօղլու խան

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ԳԵՉԵՃԱՆ

Իբլ 45 եւ 45 b.

8-10

ՖԵՆԻԲԱ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՄ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԱԼ ԱՊԱՀՈՎԱԳԻ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՐԻՔՍ ԼՈՐԻՏՏԵ ՊԱՎԻԿՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ


Ապահովագր. ԸՆԿ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւորութուն է Ի Կ. Պոլիս, Բոլքի Լիօնէ
Ընդի. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրամներէ, Պոլիս, Հանօթուլօ խան, Թ. 52-53-54-55-56 9-10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի ազդիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՄ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

- | | | |
|--------|---|--|
| ՌԵԲԱ | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ: |
| ԿԱԼԱԹԱ | } | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |

ՍԿԻՏԱՐ

Չարը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք օրի.

կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնահիղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՄ. ՊԱՆԱՏԱՆ

ԴԵՂԱՐԱՆ ԽԱՉԻԿՖԵՍՃԵԱՆ

Կ. Պոլիս, Մահմուտ փաշա Պաշի, Ապուտ Է.Բ.ի խանին դէմ 261

Սոյն բազմամեայ դեղարանը, այս ազգամ նոր կաղամկերպութենէ մը ետքը, իսպիկ Զեօնեանի կողմանէ, թիւ ատենաւան մէջ պատրուր ունեցաւ գնահատուիլ որպէս հասարակութեան, որմէ քաջաբերուելով պէտքը կըզգայ իրեն ուղղութիւնը եւ նպատակը ներկայացնել համարութեան:

ՆՊԱՏԱԿ. — Դ.Յ. ձգել իր յաճախողները միշտ դեղերու թարմութեամբ, դեղագրեւորութեամբ գործադրութեամբ, զնեյու չափաւորութեամբ եւ արուեստին խղճամբ գործադրութեամբ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ. — Մաքրութիւն, ապանեխման դրութիւն եւ պարկեշտութիւն դեղաբանին սկզբունք եղած են:

Եւրոպական տան մը հետ բանակցած ըլլալով՝ ամէն շաբթու պատուաստի թարմ քիւպեր (աւեր գալիսի) կը հասնին բոսդայով: Բացի սակէ, կը գտնուի օսմանեան, եւ եւրոպական նոր եւ միշտ թարմ դեղեր եւ մասնադեղեր, ի մէջ այլոց Մալակայի եւ Պորթոյի գիւնիներ, անդալան եւ եւրոպական ամէն տեսակ թարմ համաքային ջուրեր, Գոլօնեայի եւ Լաքրանի ջուրերու ալ խառն անասկները եւալլն. իսկ միջատապան փշիկն ամէնէն ազդեցիկ տեսակէն միշտ պատրաստ կը գտնուի:

Ամէն օր Դեղարան յաճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն յիշենք մասնաւորաբար հանրածանօթ Բժիշկ ԱԼԼԱՀԱԷՐՏԻ ԷՅ. որ ամէն Գ. Ե. Ե. օրեր ժամը 8—11 իրեն զիմող հիւանդները կը դարմանէ իրեն ծանօթ փորձառութեամբ եւ մասնագիտութեամբ, դեղարանին մասնաւոր դարմանարանը, Դեղարանը ունինաեւ ԴիճերԱՅԻՆ ՄՊԱՍ 5—10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տոքթ. Բ. Է. Էմզէ, որ իր բժշկական ուսումը կատարելագործած է Բարձրի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն ունի ի յոյժ հաստատուած է. Բերա Պէօլիք Բարձաք Գարու. Թիւ 16: Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ առանց մէ զոտ նորա. գոյն մեթոտներով կը բուժէ զղային ու հոգեկան ամէն կարգի հիւանդութիւններ ինչպէս նաեւ արգանդախնուի (hystérie) առջեկած հիւանդութիւնները, մասնաւոր անդամաւորութիւն եւ կարկամութիւն եւալլն: Ասկէ զոտ, ասկորի եւ սո. վարական խոլը (օքրոսմ), առանց գործողութեան նոր դրութեամբ մը կը դարմանէ, տեղը առանց յայտնի ընելու: Տոքթ. Է. Էմզէ Է. Բ. կը գտնուի. Բերա Պէօլիք Բարձաք Գարու, Թիւ 16 տան մէջ, ուր կիրական զատ ամէն օր կէսօրէն յետոյ ժամը 1էն մինչեւ 4 (Ը. Ե.) հիւանդ կ'ընդունի, եւ արբութ օրերն ալ ձրիաբար իր դարմանէ հիւանդները:

9—10

ՏՈՔԹ. ԲՈՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ Կայս. Բժշկական վարժարանին, աւելամ Բարձրի Բժշկական համ. ժողովին: Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական գործարան. սերու հիւանդութեանց: Պատուով կայաքիր օւնի Պէրլիէի, Լոնտոնի, Բեռլինի եւ ուրիշ երկրներու Ակադ. միներէն: Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղինակի մասնագիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունի Պոլսոյ կողմը, կամօրջին դէմի անկիւնը, իր դարմանատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն. իսկ Բերա, Թաքսիմ, Ֆրանսական հիւանդանոցին դէմ, ամէն օր առա. օտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.)

9—10

ՆՈՐ ԲԱՌԱ ԳԻՐԻ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Պատկերազարդ 1000 է աւելի էջերէ
բաղկացած

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

Նախնեաց բառերու նորաբանութիւններ,
— գաւառական բառեր հանրագիտական
հասկացման, երկրագործութեան, գիտութեան,
գիցարանութեան, առողջաբանութեան,
օրինագիտութեան, ճարտարութեան:

Գործնական կենաց վրայ:

Հայերէն լեզուի բառական ճօն եւ դիւ-
րաւոր բառադրքի մը պէտքը ընդհանուր
եղած էր ցարդ: Ահա այդ պէտքը լրացնե-
լու կոչուած է այն գործն, օգտակարով հայ
եւ օտար բաղմաթիւ բառադրքերէ: Խիստ
քով հետադասուած են բառերու ճշգրիտ
նշանակութիւններն, տեղն ուր եւ ամփոփ
օտարներն, իրենց հակադրութիւնով ու հա-
մադրութիւնով, հին ու նոր պէսպէս առում-
ներով: Չանց չէ առնուած նաեւ դնել բա-
ռերու ծագումն, կենդանեաց, բուսեց ո՛ր

դասակարգութեան վերաբերիլը, ի հարկն
տեղն թուրքերէն ու ֆրանսերէնն եւս:

Բացի բուն բառադրքէն՝ գործայտ ամբողջ
ընթացքին մէջ հանրագիտական հասկա-
նէր կարեւոր տեղեկութիւն կուտան երկրա-
գործութեան, գիտութեան, գիցարանու-
թեան, առողջաբանութեան, օրինագիտու-
թեան, ճարտարութեան, գործնական կենաց
վրայ:

Հրատարակուած են առաջին երեք թերթերն
եւ միւսներն ալ յաջորդաբար կանոնաւորա-
պէս լոյս պիտի տեսնեն: Թուրք ազնիւ եւ
ապագործութիւն ընտիր եւ խնամակալ, գորդա-
ւած յաւկապէս փորագրուած փրօնն եւ
ճաշկուտը պատկերներով:

Բացուած է բաժանորդագրութիւն հանրա-
լին քաղաքներէն արժանի օրն գերազան-
ցապէս օգտակար գործայտ համար, 20 դա-
նկեան, Պոլսոյ, 25՝ գաւառաց, թղթաւորի
ծախուց համար եւ 6 ֆրանք օտար երկր-
ներու համար:

Հեղինակին հասցէն՝

Կ: Պօլիս, Հաճօրուլօ խան, թիւ 24

9-10

ձիւղ ուղածնիդ--ձիւղ փնտրածնիդ

ԺԱՄԱՆՑ ԿԱՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՂԵՐ

Գրեց Ք. Տ. Ս. ՓԱՓԱՋՅԱՆ

Ընտանեկան տնային խաղերու գեղեցիկ
հաւաքածոյ:

Անհրաժեշտ ծերերուն, երիտասարդներուն
եւ տղայոց համար միանգամայն: Ամէն հա-
սակի մարդոց քով պէտք է գտնուի այս
գրքաւորի ու օգտակար գիրքէն հաւ մը:—
Այլեւս մի՛ ըտէք թէ «Դիւերները երկարեցան,
ինչպէ՛ս ժամանակ պիտի տնցընենք»: ԺԱ.
ՄԱՆՅԱՎ կրնաք ժամերով գրօսնուլ եւ գրօ-
ցնել ձեր հիւրերը:

Կը գտնուի ամէն գրալուծառներու քով,
եւ հեղինակին քով՝ ի Պոլսոյ Հաւուս: Գին
խիտաւ արժանի, ճիշդ դրս. 1-5

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե-
սակ գոհարեղէններ ունե-
նալ, աժա՛ն ու ճաշկա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշկով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ գա-
ւաղաններ եւայլն, դիմե-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
կան, Մեծ-փողոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար
100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնո-
ղին համար հարիւրին 5 գեղչ: Գործածուած
գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին
10 գեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ դը-
նողներէն՝ 100ին 15 գեղչով:

9-10